# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 58-Ա** **07 փետրվարի 2022 թ.**

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 16-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Արտակարգ իրավիճակների նախարարի 2022 թվականի հունվարի 29-ի N 01/11.1.2/358-2022 հանձնարարականը

***որոշում եմ՝***

1. Ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող Գեղարքունիքի մարզային հանձնաժողով:

2. Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող Գեղարքունիքի մարզային հանձնաժողովի անհատական կազմը՝

| | |
|---|---|
| Նավոյան Ռուբիկ | - Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ |
| Գալստյան Գևորգ | - Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ /համաձայնությամբ/ |
| Մուշեղյան Յուրա | - մարզպետարանի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ |
| Զոհրաբյան Արմեն | - մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ |

| | |
|---|---|
| Պետրոսյան Մարտին | - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| Զազյան Կարեն | - մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության պետ |
| Վարդանյան Լուսինե | - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ |
| Հարությունյան Վանիկ | - մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ |
| Խաչատրյան Գևորգ | - մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ |

Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ:

3. Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Վանիկ Հարությունյանին՝ առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշման պահանջների համաձայն ստեղծել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մշտական գործող համայնքային հանձնաժողովներ, հաստատել դրանց անհատական կազմերը և աշխատակարգերը:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հունվարի 23-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման մարզային հանձնաժողով ստեղծելու և մարզային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» N 16-Ա որոշման 1-ին կետը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ռուբիկ Նավոյանին:

07.02.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ